

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետը, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 46-րդ կետի 12-րդ ենթակետը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանի հավելվածի 5-րդ կետը, Գիտական խորհրդի 2016 թվականի ապրիլի 29-ի թիվ 06 որոշմամբ հաստատված Մագիստրատուրայի կանոնակարգը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

-

1.«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) մագիստրատուրայի ընդունելության անցկացման նպատակով ստեղծել ընդունող հանձնաժողով և հաստատել կազմը՝ համաձայն հավելվածի:

2.Սահմանել Համալսարանի 2024-2025 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության հետևյալ ժամկետները.

1) «Ֆարմացիա» մասնագիտությամբ՝

ա. Համալսարանի և այլ բուհերի բակալավրի կրթական ծրագրով «Ֆարմացիա» մասնագիտությամբ շրջանավարտների դիմումներն ընդունվում են երկու փուլով՝

- I փուլ - 2024թ. հունիսի 17-ից մինչև հուլիսի 4-ը.
- II փուլ - 2024թ. հուլիսի 8-ից մինչև օգոստոսի 23-ը.

բ.Այլ բուհերի երկրորդ փուլի ընդունելության միջառարկայական համակարգչային թեստային քննության օր սահմանել՝ 2024թ. օգոստոսի 27-ին ժամը 10⁰⁰, (փորձնական քննության օր սահմանել՝ 2024թ. օգոստոսի 26-ին ժամը 10⁰⁰).

2) «Հանրային առողջություն և առողջապահություն» և «Բիզնես վարչարարություն» մասնագիտություններով՝

ա. Համալսարանի և այլ բուհերի շրջանավարտների համար դիմումներն ընդունվում են երկու փուլով՝

- I փուլ – 2024թ. հունիսի 17-ից մինչև հուլիսի 4-ը.
- II փուլ - 2024թ. հուլիսի 8-ից մինչև օգոստոսի 28-ը.

բ.«Հանրային առողջություն և առողջապահություն» և «Բիզնես վարչարարություն» մասնագիտությունների հարցազրույցի օրեր սահմանել 2024թ. օգոստոսի 29-ին, 30-ին:

3.Հանձնարարել Համալսարանի ուսումնամեթոդական վարչությանը՝ ապահովել սույն հրամանի կատարումը:

Հավելված
«Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի 2024 թվականի հունիսի 05 -ի թիվ 79 Մ - 1 հրամանի

ԿԱԶՄ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Ավետիսյան Լարիսա Ռաֆայելի - նախագահ, ուսումնական
աշխատանքների գծով պրոռեկտոր

Հանձնաժողովի անդամներ՝

- 2. Հայրապետյան Մարինե Գրիշայի - ուսումնամեթոդական վարչության
պետ
- 3. Ենոքյան Բագրատ Զանիկի - դեղագիտական ֆակուլտետի դեկան
- 4. Հովհաննիսյան Մարինե Գևորգի - հանրային առողջության ֆակուլտետի
դեկան: